ՀՆԱՁԻՈՐ

ԱՐՇԱԼՈՅՍ ՄԽԻԹԱՐԵԱՆԻ

Անցեալ ամառն էր։ Ծերուկ Գալոյին
Հընձի ժամանակ տեսայ ես արտում.
Կէսօրեան արևն այրում էր գետին,
Յոգնած հընձուորին նա չէր խընայում։
Կապոյտ երկնքում չը կային ամպեր,
Խեղդող տօթի մէջ չէր շարժւում քամի,
Լայնարձակ դաշտում չը կար մի ըստուեր
Եւ մեղձակալքում զովարար առուի
Չէր լըսւում քըրքիջ. բայց Գալօն արագ
Շարժում էր ուրախ ուրախ գերանդին—
Ամառ էր ցորեան՝ գիւղացու միակ
Այդ յոյսն, ապաւէնն երկրի երեսին։
Թող հեղեղ-քըրտինք նորա երեսից
Վազէր, ծովանար մայր-երկի վերայ։
Թող արիւն հոսէր նորա ճակատից՝
Անհոգ ժըպիտով աշխատում էր նա։

Գըմեռւան թըխպոտ օրերից մէկն էր։
Անցնում էի ես Գալոյի գիւղից,
Մըտայ նորա տուն։ Տըխուր տանուտէր
Անկիւնում նըստած գողում էր ցըրտից.
Կին ու զաւակներ ցընցոտիներով
Մի այլ անկիւնում ծածկած մերկութիւն

Լաց էին լինում լուռ հեկեկանքով.
Որպէս աւերակ դատարկ էր այդ տունն։
Հիւրասէր Գալօն չը բերեց ինձ հաց...
Նըստած էի ես այնտեղ շըւարած
Ու տրխուր նայում մըրոտ պատերին,
Երբ յանկարծ աչքիս ընկաւ գերանդին.—
Եւ ես ակամայ յիշեցի այն օր,
Երբ արիւն քըրտինք թափում էր հընձուոր
Առատ, անխընայ մայր-երկրի վերայ,
Երբ տնհոգ, ուրախ աշխատում էր նա...